Արձանագրության 4
« ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/212» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07.11.2019թ.
ժամը՝ 12:20

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գասպարյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Մարտիրոսյան , Հ. Թորոսյան,Ս. Սողոմոնյան , Ա. Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Թ.Հովեսյան

1. Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ա. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցների՝ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցները հայտերտ ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց հարկային պարտավորություն:

-«Օազիս կոմպյուտեր» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է գնման առարկայի իր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրերը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերով սահմանված բնութագրին համապատասխան,

-«Շողիկ Մանասերյան Վոլոդյայի» ԱՁ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացվել գնման առարկայի իր կողմից առաջարկված տեխնիկական բնութագրերը: Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 46-րդ կետի դրությով՝ որոշեց նիստը ընդհատել և ծանուցել մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում անհամապատասխանությունը շտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպում հանձնաժողովի որոշմամբ հայտը կմերժվի և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Գասպարյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 13.11.2019թ. ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 2-րդ հարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Գասպարյան
Անդամներ՝ ---------- Հ. Մարտիրոսյան
---------- Հ. Թորոսյան
---------- Ս. Սողոմոնյան
---------- Ա. Կարապետյան
Քարտուղար՝ ---------- Թ.Հովեսյան